ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ԱԼԱՇԿԵՐՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВ ИРСКАЯ ГУБЕРНИЯ
СЕЛО. АЛАШКЕРТ

VILLAGE ALASHKERT MARZ OF ARMAVIR REPUBLIC OF ARMENIA

Արմավիրի մարզպետ՝

Պարոն ՝ Հ. Մաթևոսյանին

21-.07.2021թ.

Թիվ 97

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է Ալաշկերտ համայնքի ավագանու 16.07.2021թ. կայացած թիվ 5 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 30 էջ:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 14

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածով.

1. Հաստատել ավագանու 2021 թվականի հուլիսի 16-ի թիվ 5արտահերթ նիստի օրակարգը.

1)ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2) ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ՀՐԱՏԱՊ ԿԵՐՊՈՎ ՆՈՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

3) ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄՏԵՂԱԿԱՆՏՈՒՐՔԵՎՎՃԱՐՎՃԱՐՈՂՆԵՐԻԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸՎԱՐԵԼՈՒԿԱՐԳԸՀԱՍՏԱՏԵԼՈՒՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏՀԱՄԱՅՆՔՈՒՄԱՐՏԱՔԻՆԳՈՎԱԶԴՏԵՂԱԴՐԵԼՈՒԿԱՐԳՆՈՒՊԱՅՄԱՆՆԵՐԸՀԱՍՏԱՏԵԼՈՒՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

5) ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՐՄԱՎԻՐԻՄԱՐԶԻԱԼԱՇԿԵՐՏՀԱՄԱՅՆՔԻՎԱՐՉԱԿԱՆՏԱՐԱԾՔՈՒՄՀԱՆՐԱՅԻՆՍՆՆԴԻԿԱԶՄԱԿԵՐՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

6)ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

7) ԱԼԱՇԿԵՐՏՀԱՄԱՅՆՔԻՎԱՐՉԱԿԱՆՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄԳՏՆՎՈՂԱՆՇԱՐԺԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԿԱՄՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐՏԻՐԱՊԵՏՄԱՆՏԱԿԳՏՆՎՈՂԱՆՇԱՐԺԳՈՒՅՔԻ ԵՎԴՐԱՆՀԱՐԱԿԻՑԸՆԴՀԱՆՈՒՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՏԱՐԱԾՔԻՊԱՐՏԱԴԻՐԲԱՐԵԿԱՐԳՄԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

8)ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 15-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

9) ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 15

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ՀՐԱՏԱՊ ԿԵՐՊՈՎ ՆՈՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով 42-րդ կետով , 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների առաջարկությունները .

1. Ալաշկերտ համայնքում հրատապ կարգով կատարել կենտրոնական փողոցի և դրանից սնվող փողոցների խմելու ջրի խողովակաշարի փոխարինումը նորով ընդհամենը 1746 մետր համաձայն հաշվարկված հրատապ վերանորոգման ծավալաթերթի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 16

ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարել փաստաթղթային:

2. Հաստատել տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 1-ի, տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

Հավելված 1

Ալաշկերտ համայնքի ավագանու

2021 թվականի հուլիսի 16 -ի N 16 որոշման

Հ/Հ	Անուն Ազգանուն Հայրանուն	Օր ամիս ամսաթիվ	Տեղական տուրքի հասցեն	Վճարի չափ	Վճարված գումար

Հավելված 2

Ալաշկերտ համայնքի ավագանու

2021 թվականի հուլիսի 16 -ի N 16 որոշման

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

Հ/Հ	Անուն Ազգանուն Հայրանուն	Օր ամիս ամսաթիվ	Տեղական վճարի անուն	Վճարի չափ	Վճարված գումար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ,

1. Հաստատել Ալաշկերտ համայնքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված 3

Ալաշկերտ համայնքի ավագանու

2021 թվականի հուլիսի 16 -ի

N 17 որոշման

ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները (Այսուհետ՝ Կարգ): Սույն Կարգն ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
2. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում: Արտաքին գովազդ են համարվում «Ալաշկերտ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչներով» (այսուհետ՝ Չափորոշիչներ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:
4. Կարգով հաստատված կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով Ալաշկերտ համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին)՝ միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:
6. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն Կարգի պահանջներին:

II Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն

1. Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվությունը (Այսուհետ՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և սահմանված Կարգով տրվում է Ալաշկերտ համայնքի ղեկավարի կողմից՝ համաձայն ձև 1-ի:

2. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Ալաշկերտ համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները: Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:
3. Ալաշկերտ համայնքը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղաբաշխման (տեղադրման) ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:
4. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Ալաշկերտ համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:
5. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝
   1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին.
   2) խախտվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Կարգի և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջները.
   3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:
6. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:
7. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է համայնքին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ:
8. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, սույն Կանոնների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:
9. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով

սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

10. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

11. Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

12. Կարգով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

III ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:
2. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն թաղային համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:
3. Կարգով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է համայնքի ավագանու կողմից:
4. Կարգով համապատասխան վճարված գումարներն ուղղվում են համայնքի բյուջե:
5. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):
6. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կապակցությամբ համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:
7. Ալաշկերտ համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է համայնքի ղեկավարը՝ գովազդի մասին օրենսդրության պահանջների համաձայն:
8. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

IV Արտաքին գովազդ տեղադրելու պայմանները

1. Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև

ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

2. Արգելվում է գովազդ տեղադրել թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների ներսում, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերում և նրանց տարածքում:

3. Արտաքին գովազդը չպետք է գերազանցի 5 մետր քառակուսին և պարունակելու է միայն իր ֆիրմային անվանումը (լոգոն): Վիճակախաղերի, տոտալիզատորների, ինտերնետ շահումով խաղերի անցկացման վայրերի շենքերի, շինությունների կամ սրահների մուտքերի մոտ արտաքին գովազդը չպետք է գերազանցի 0.5 մետր քառակուսին և պարունակելու է միայն իր ֆիրմային անվանումը (լոգոն): Շենքերի, շինությունների վերելակներում և մուտքերում, ինչպես նաև հանրային սննդի և բնակչության սպասարկման տարածքներում արգելվում է վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի գովազդը:

4. Համայնքի տարածքում գովազդը և դրանց առանձին մասերը չեն կարող տեղաբաշխվել (տեղադրվել) երթևեկելի մասի մակերևույթից 6 մ-ից ցածր բարձրությամբ եզրաքար չունեցող ճանապարհի կողքին, հողեզրից 3 մ-ից պակաս հեռավորության վրա:

5. Գովազդի միջոցները չպետք է՝

1) խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մաքրմանը.

2) սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա.

3) առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում՝ նաև անդրադարձող).

4) հանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք.

5) լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա.

6) տեղադրված լինեն փողոցների խաչմերուկների սահմաններից և դրանց մոտեցումներից 20 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

6. Գովազդի առանձին կանգնած մնայուն միջոցների տեսակները՝

Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից.

1) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

- մեծ չափերի—3մ X 4մ, 3մ X 6մ և այլ չափերի
- միջին չափերի—1.8մ X1.2մ, 2մ X 3մ
- փոքր չափերի—0.6մ X 0.9մ և ավելի փոքր չափերի.

7. Վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

1) երկկողմանի կատարում,

2) միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է:

8. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ -ից ոչ պակաս բարձրության վրա:

9. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վերականգնելով սիզամարգի ծածկույթը:

10. Սույն Կարգում չընդգրկված նորմերը կկարգավորվեն գովազդի մասին ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ այլ համապատասխան իրավական ակտերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ____

Տրվում է _____

գովազդատուի և (կամ) գովազդակրի անվանումը

_____

արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) վայրը (տեղը)

_____

արտաքին գովազդ տեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը

(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և այլն)

_____

գովազդի տեսակը

_____

գովազդային նյութի անվանումը

Գովազդի մակերեսը _____ քմ

Թույլտվության գործողության ժամկետը՝ «__»_____20__թ.

Առ՝«__»_____20__թ.

..... համայնքի ղեկավար՝ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված 4

Ալաշկերտ համայնքի ավագանու

2021 թվականի հուլիսի 16 -ի N 18 որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Ալաշկերտ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,

ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի և գնի նշումով,

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

8.Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

11. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման: Ճաշացուցակը պետք է լինի հայերեն, անգլերեն, ցանկալի է նաև պարսկերեն լեզուներով:

15. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

16. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

17. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

18. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

19. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

20. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի կատարման երկրորդեռամսյակի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀՀ ֆինանսների նախար, 204088, Սովետական

Հաշվետվություն

Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

(02/01/21 - 30/06/21թ. ժամանակահատվածի համար)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի հս	Ընդամենը (ս.8+ս.9)	Տարեկան ճշտված պլան վարչական բյուջե	այդ թվում ինդային բյու	Ընդամենը (ս.11+ս.12)	Փաստացի վարչական բյուջե	այդ թվում ային բյուջե
1	2	3	7	8	9	10	11	12
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող		67 081 600,00	67 081 600,00	0,00	31 080 371,00	31 080 371,00	0,00
1100	այդ թվում 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող	7100	18 500 000,00	18 500 000,00	X	7 599 941,00	7 599 941,00	X
1110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	7 770 000,00	7 770 000,00	X	1 502 026,00	1 502 026,00	X
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների		217 000,00	217 000,00	X	31 564,00	31 564,00	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական		7 553 000,00	7 553 000,00	X	367 000,00	367 000,00	X
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի		0,00	0,00	X	1 103 462,00	1 103 462,00	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	10 670 000,00	10 670 000,00	X	6 015 415,00	6 015 415,00	X
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցնե		10 670 000,00	10 670 000,00	X	6 015 415,00	6 015 415,00	X
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող	7145	60 000,00	60 000,00	X	82 500,00	82 500,00	X
11307	Համայնքի վարչական տարածքում		60 000,00	60 000,00	X	82 500,00	82 500,00	X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 +	7300	39 297 600,00	39 297 600,00	0,00	19 394 200,00	19 394 200,00	0,00
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական	7331	39 297 600,00	39 297 600,00	X	19 394 200,00	19 394 200,00	X
1251	Պետական բյուջեից ֆինանսական		37 770 400,00	37 770 400,00	X	18 870 200,00	18 870 200,00	X

1252	Պետական բյուջեից տրամադրվող այլ		0,00	0,00	X	15 000,00	15 000,00	X
1253	Համայնքի բյուջեի եկամուտները		0,00	0,00	X	15 000,00	15 000,00	X
1255	Պետական բյուջեից տրամադրվող		1 527 200,00	1 527 200,00	X	509 000,00	509 000,00	X
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող	7400	9 284 000,00	9 284 000,00	0,00	4 086 230,00	4 086 230,00	0,00
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող	7422	8 204 000,00	8 204 000,00	X	3 511 160,00	3 511 160,00	X
1351	Տեղական վճարներ (տող13501+տող13		8 204 000,00	8 204 000,00	X	3 511 160,00	3 511 160,00	X
13501	Համայնքի տարածքում շենքի կամ		0,00	0,00	X	232 160,00	232 160,00	X
13514	Համայնքային ենթակայության արտադպրոցակա		8 184 000,00	8 184 000,00	X	3 269 000,00	3 269 000,00	X
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի		20 000,00	20 000,00	X	10 000,00	10 000,00	X
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392	7452	1 080 000,00	1 080 000,00	0,00	575 070,00	575 070,00	0,00
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով		1 080 000,00	1 080 000,00	0,00	575 070,00	575 070,00	0,00

ՀՀ Ֆինանսների նախար, 204088, Սովետական

Հաշվետվություն

Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ

02/01/21 - 30/06/21թ. ժամանակահատվածի համար

Տողի NN	Բյուջետային ծախսերի գործառական	ԱԺԻՈՒՆԱ			Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.10+ ս11)	այդ թվում վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	Փաստացի Ընդամենը (ս.13+ ս14)	այդ թվում վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	9	10	11	12	13	14
2000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2	X	X	X	74 261 700,00	67 081 600,00	7 180 100,00	35 875 481,20	29 986 831,00	5 888 650,20
2100	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ	1	0	0	31 489 100,00	27 269 000,00	4 220 100,00	17 091 084,60	13 692 434,40	3 398 650,20
2110	Օրենսդիր և գործադիր մարմիններ,	1	1	0	27 159 100,00	23 739 000,00	3 420 100,00	14 345 235,20	11 746 285,20	2 598 950,00
2111	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պե	1	1	1	27 159 100,00	23 739 000,00	3 420 100,00	14 345 235,20	11 746 285,20	2 598 950,00
2130	Ընդհանուր բնույթի ծառայություններ	1	3	0	180 000,00	180 000,00	0,00	64 400,00	64 400,00	0,00
2133	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1	3	3	180 000,00	180 000,00	0,00	64 400,00	64 400,00	0,00
2160	Ընդհանուր բնույթի հանրային	1	6	0	4 150 000,00	3 350 000,00	800 000,00	2 681 449,40	1 881 749,20	799 700,20
2161	Ընդհանուր բնույթի հանրային	1	6	1	4 150 000,00	3 350 000,00	800 000,00	2 681 449,40	1 881 749,20	799 700,20
2400	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4	0	0	2 525 800,00	1 535 800,00	990 000,00	2 233 454,00	1 253 454,00	980 000,00
2420	Գյուղատնտեսություն, անտառային	4	2	0	555 800,00	555 800,00	0,00	277 854,00	277 854,00	0,00
2421	Գյուղատնտեսություն	4	2	1	555 800,00	555 800,00	0,00	277 854,00	277 854,00	0,00
2450	Տրանսպորտ	4	5	0	1 970 000,00	980 000,00	990 000,00	1 955 600,00	975 600,00	980 000,00
2451	ճանապարհային տրանսպորտ	4	5	1	1 970 000,00	980 000,00	990 000,00	1 955 600,00	975 600,00	980 000,00

2500	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹ	5	0	0	1 111 500,00	1 111 500,00	0,00	555 708,00	555 708,00	0,00
2510	Աղբահանում	5	1	0	1 111 500,00	1 111 500,00	0,00	555 708,00	555 708,00	0,00
2511	Աղբահանում	5	1	1	1 111 500,00	1 111 500,00	0,00	555 708,00	555 708,00	0,00
2600	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹ	6	0	0	7 268 000,00	5 298 000,00	1 970 000,00	3 732 874,60	2 222 874,60	1 510 000,00
2630	Ջրամատակարարում	6	3	0	5 470 000,00	3 500 000,00	1 970 000,00	2 317 274,60	807 274,60	1 510 000,00
2631	Ջրամատակարարում	6	3	1	5 470 000,00	3 500 000,00	1 970 000,00	2 317 274,60	807 274,60	1 510 000,00
2640	Փողոցների լուսավորում	6	4	0	1 798 000,00	1 798 000,00	0,00	1 415 600,00	1 415 600,00	0,00
2641	Փողոցների լուսավորում	6	4	1	1 798 000,00	1 798 000,00	0,00	1 415 600,00	1 415 600,00	0,00
2800	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	8	0	0	2 011 500,00	2 011 500,00	0,00	1 459 740,00	1 459 740,00	0,00
2820	Մշակութային ծառայություններ	8	2	0	2 011 500,00	2 011 500,00	0,00	1 459 740,00	1 459 740,00	0,00
2821	Գրադարաններ	8	2	1	1 111 500,00	1 111 500,00	0,00	559 740,00	559 740,00	0,00
2824	Այլ մշակութային կազմակերպութ	8	2	4	900 000,00	900 000,00	0,00	900 000,00	900 000,00	0,00
2900	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+	9	0	0	21 805 200,00	21 805 200,00	0,00	10 802 620,00	10 802 620,00	0,00
2910	Նախադպրոցական և տարրական	9	1	0	18 370 000,00	18 370 000,00	0,00	8 813 203,00	8 813 203,00	0,00
2911	Նախադպրոցական կրթություն	9	1	1	18 370 000,00	18 370 000,00	0,00	8 813 203,00	8 813 203,00	0,00
2950	Ըստ մակարդակների	9	5	0	3 435 200,00	3 435 200,00	0,00	1 989 417,00	1 989 417,00	0,00
2951	Արտադպրոցական դաստիարակու	9	5	1	3 435 200,00	3 435 200,00	0,00	1 989 417,00	1 989 417,00	0,00
3000	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	10	0	0	2 200 000,00	2 200 000,00	0,00	0,00	0,00	0,00
3070	Սոցիալական հատուկ արտոնություններ	10	7	0	2 200 000,00	2 200 000,00	0,00	0,00	0,00	0,00

3071	Սոցիալական հատուկ պատրոնություններ	10	7	1	2 200 000,00	2 200 000,00	0,00	0,00	0,00	0,00
3100	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ	11	0	0	5 850 600,00	5 850 600,00	0,00	0,00	0,00	0,00
3110	ՀՀ կառավարության և	11	1	0	5 850 600,00	5 850 600,00	0,00	0,00	0,00	0,00
3112	ՀՀ համայնքների պահուստային	11	1	2	5 850 600,00	5 850 600,00	0,00	0,00	0,00	0,00

ՀՀ ֆինանսների նախար, 204088, Սովետական
Հաշվետվություն
Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
(02/01/21 - 30/06/21թ. ժամանակահատվածի համար)

սսակարգման հոդվածների սրեկան ճշտված պլան | Փաստացի

Տողի NN	անվանումները	NN	Ընդամենը (ս.8+ս.9	այդ թվում՝ վարչական մաս	ֆոնդային մաս	Ընդամենը (ս.11+ս.1	այդ թվում՝ վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	7	8	9	10	11	12
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		74 261 700,00	67 081 600,00	7 180 100,00	35 875 481,20	29 986 831,00	5 888 650,20
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	x	67 081 600,00	67 081 600,00	0,00	29 986 831,00	29 986 831,00	0,00
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒ	x	19 137 000,00	19 137 000,00	X	9 077 079,00	9 077 079,00	X
4110	ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐ	x	19 137 000,00	19 137 000,00	X	9 077 079,00	9 077 079,00	X
4111	- Աշխատողների	111	19 137 000,00	19 137 000,00	X	9 077 079,00	9 077 079,00	X
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ	x	17 588 800,00	17 588 800,00	X	9 783 212,00	9 783 212,00	X
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	x	6 450 000,00	6 450 000,00	X	2 379 708,80	2 379 708,80	X
4212	-Էներգետիկ ծառայությունները	211	6 000 000,00	6 000 000,00	X	2 296 940,80	2 296 940,80	X
4214	-Կապի ծառայությունները	211	350 000,00	350 000,00	X	82 768,00	82 768,00	X
4215	- Ապահովագրական ծախսեր	211	100 000,00	100 000,00	X	0,00	0,00	X
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅ	X	1 310 000,00	1 310 000,00	X	1 113 200,00	1 113 200,00	X
4232	- Համակարգչային	231	180 000,00	180 000,00	X	64 400,00	64 400,00	X
4234	- Տեղակատվական	231	80 000,00	80 000,00	X	48 000,00	48 000,00	X

4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423	1 050 000,00	1 050 000,00	X	1 000 800,00	1 000 800,00	X
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ	x	755 800,00	755 800,00	X	277 854,00	277 854,00	X
4241	- Մասնագիտական	424	755 800,00	755 800,00	X	277 854,00	277 854,00	X
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ	x	1 580 000,00	1 580 000,00	X	1 187 600,00	1 187 600,00	X
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ	425	980 000,00	980 000,00	X	975 600,00	975 600,00	X
4252	-Մեքենաների և սարքավորում	425	600 000,00	600 000,00	X	212 000,00	212 000,00	X
4260	ՆՅՈՒԹԵՐ (տող4261+տող4262+տող42	x	7 493 000,00	7 493 000,00	X	4 824 849,20	4 824 849,20	X
4261	- Գրասենյակային նյութեր և	426	800 000,00	800 000,00	X	235 940,00	235 940,00	X
4264	- Տրանսպորտային նյութեր	426	2 495 000,00	2 495 000,00	X	1 729 579,20	1 729 579,20	X
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426	800 000,00	800 000,00	X	271 280,00	271 280,00	X
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	426	3 398 000,00	3 398 000,00	X	2 588 050,00	2 588 050,00	X
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	x	20 578 000,00	20 578 000,00	X	10 694 620,00	10 694 620,00	X
4410	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ	x	20 578 000,00	20 578 000,00	X	10 694 620,00	10 694 620,00	X
4411	- Սուբսիդիաներ ոչ-	451	20 578 000,00	20 578 000,00	X	10 694 620,00	10 694 620,00	X
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ		1 527 200,00	1 527 200,00	X	408 000,00	408 000,00	X
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	x	1 527 200,00	1 527 200,00	X	408 000,00	408 000,00	X
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական	463	1 527 200,00	1 527 200,00	X	408 000,00	408 000,00	X
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ	x	2 200 000,00	2 200 000,00	X	0,00	0,00	X
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱ	x	2 200 000,00	2 200 000,00	X	0,00	0,00	X

4634	-Այլ նպաստներ բյուջեից	472	2 200 000,00	2 200 000,00	X	0,00	0,00	X
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող4710+տող	x	6 050 600,00	6 050 600,00	0,00	23 920,00	23 920,00	0,00
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ	x	200 000,00	200 000,00	X	23 920,00	23 920,00	X
4723	-Պարտադիր վճարներ	482	200 000,00	200 000,00	X	23 920,00	23 920,00	X
4770	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	5 850 600,00	5 850 600,00	0,00	0,00	0,00	0,00
4771	- Պահուստային միջոցներ	489	5 850 600,00	5 850 600,00	0,00	0,00	0,00	0,00
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ	x	7 180 100,00	X	7 180 100,00	5 888 650,20	X	5 888 650,20
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	7 180 100,00	X	7 180 100,00	5 888 650,20	X	5 888 650,20
5110	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	x	4 780 100,00	X	4 780 100,00	3 788 760,20	X	3 788 760,20
5113	- Շենքերի և շինություններ ի կապիտալ	511	4 780 100,00	X	4 780 100,00	3 788 760,20	X	3 788 760,20
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒ	x	2 400 000,00	X	2 400 000,00	2 099 890,00	X	2 099 890,00
5121	- Տրանսպորտային	512	1 600 000,00	X	1 600 000,00	1 599 890,00	X	1 599 890,00
5122	- Վարչական սարքավորումներ	512	800 000,00	X	800 000,00	500 000,00	X	500 000,00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 20

ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով.

1. Հաստատել Ալաշկերտ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 5

Ալաշկերտ համայնքի ավագանու

2021 թվականի հուլիսի 16-ի N 20որոշման

Կ Ա Ր Գ

ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Ալաշկերտ վարչական սահմաններում գտնվող անշար գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրա հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմաններ (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Ալաշկերտ սանիտարական վիճակ և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմաններ հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանման որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործմա տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նա անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Ալաշկերտ համայնքի վարչական սահմաններում տեղակայվա (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերո գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կա տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքեր շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարաններ բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կա տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանո օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կա ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխու փոխարինում.

6) նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարում Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 1: ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքներ կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգում փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկ սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստան Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին N 91 որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքու թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարությա թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ իրականացվում են Ալաշկերտ համայնքի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցվ ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում տրվում է Նոր Արմավիրի համայնքապետարանի համապատասխան մասնագետի կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցներ ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետակ լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգմ

կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Ալաշկերտ համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Ալաշկերտ համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամ 08.00-ից մինչև 09.00-ն և երեկոյան ժամը 18.00-ից մինչև 19.00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11.00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21.00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպություններ ներգրավման միջոցով:

16. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնի համամասնորեն:

17. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործ
իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործ
կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգմա
մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից

18. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգ
աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սնն
զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի
օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառու
դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մ
եզրաքարը,

3) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարա
պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

4) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբ
տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարա
պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարա
պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

19. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումն
վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 15-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի ապրիլի 27-ի ՆՄՈ/126-2021 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2021 թվականի հունիսի 9-ից մինչև հունիսի 15-ը համայնքում իրականացված իրավական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումներն ու թերություններն ընդունել ի գիտություն:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու թերություններն ուղղելու և հետագայում բացառելու ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, , alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 22

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 23.10. 2000 թվականի թիվ 656 ՀՀ կառավարության որոշման ՀՀ հողային հաշվեկշիռը կազմելու կարգի 9-րդ կետով և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով:

1.Հաստատել 2021 թվականի հողային հաշվեկշիռը :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԼՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ